

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

«----» ----- 2019թ.

N----Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ
ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ԱՎՏՈՎԱՅԱՆԱՏԵՂԻՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԱՅԻՆ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով քաղաքացիական օրենսգրքի **954-968**-րդ հոդվածները, Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի դեկտեմբերի **25**-ի N **41**-Ն որոշման հավելվածի **12**-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով հայտարարել մրցույթ՝ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Երևան քաղաքի Ազատության հրապարակում գտնվող ստորգետնյա ավտոկայանատեղին (այսուհետ՝ ավտոկայանատեղի) հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ:

2. Սահմանել, որ մրցույթին իրավունք ունեն մասնակցել այն իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը, ովքեր.

1) անշարժ գույքի հավատարմագրային կառավարման ոլորտում ունեն առնվազն երեք տարվա փորձ.

2) վերջին երեք տարվա ընթացքում ունեն տարեկան միջին հաշվարկային առնվազն **300,000,000.0** (երեք հարյուր միլիոն) դրամի շրջանառություն:

3. Սահմանել մրցույթի հաղթողին որոշելու նպատակով հետևյալ էական պայմանները.

1) Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո հավատարմագրային կառավարչի գործունեությունից առաջին, երկրորդ և երրորդ տարիների ընթացքում առաջացած շահույթից Երևան համայնքի մասնաբաժնի հետևյալ նվազագույն չափերը.

ա. առաջին տարին՝ **77,000,000.0** (յոթանասուներեք միլիոն) դրամ.

բ. երկրորդ տարին՝ **85,000,000.0** (ութսունհինգ միլիոն) դրամ.

գ. երրորդ տարին՝ **100,000,000.0** (հարյուր միլիոն) դրամ:

2) Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո հավատարմագրային կառավարչի գործունեության չորրորդ և հետագա տարիներին տարեկան շահույթից Երևանի քաղաքապետարանի մասնաբաժնի հետևյալ նվազագույն չափը. ընդհանուր շահույթի առնվազն **50** (հիսուն) տոկոսը, բայց ոչ պակաս, քան **100,000,000.0** (հարյուր միլիոն) դրամ:

4. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի անունից մրցույթում հաղթող ճանաչված հավատարմագրային կառավարչի հետ կնքել հավատարմագրային կառավարման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), **10** (տասը) տարի գործողության ժամկետով՝ հանդես գալով որպես հավատարմագրային կառավարման հիմնադիր, Պայմանագրում, որպես պայմանագրային պարտավորություն, ներառելով մրցույթի հաղթողի կողմից սույն որոշման **2**-րդ կետի համաձայն առաջարկած պայմանները, ինչպես նաև ստորև նշված էական պայմանները.

1) առանց հավատարմագրային կառավարման հիմնադրի գրավոր համաձայնության՝ հավատարմագրային կառավարիչն իրավունք չունի օտարել, գրավ դնել, վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնել ավտոկայանատեղին.

2) հավատարմագրային կառավարիչը պարտավոր է ապահովել ավտոկայանատեղիի անխափան և անվտանգ շահագործումը՝ համաձայն օրենսդրությամբ սահմանված նորմերի.

3) հավատարմագրային կառավարիչը պարտավոր է ներդնել ավտոկայանատեղիի մուտքի և ելքի ավտոմատ կառավարման, վճարման և տեսահսկման համակարգեր, արդիականացնել լուսավորության համակարգը, ինչպես նաև կատարել հիմնական վերանորոգման աշխատանքներ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի դեկտեմբերի **25**-ի N **41**-Ն որոշման հավելվածի **12**-րդ կետի՝ սույն որոշման նախագծով նախատեսվում է Երևան քաղաքի Ազատության հրապարակում գտնվող ստորգետնյա ավտոկայանատեղիի աշխատանքների կազմակերպումը հանձնել հավատարմագրային կառավարման՝ ելնելով ավտոկայանատեղիի գործունեության արդյունավետության բարձրացման և ներդրումների ներգրավման անհրաժեշտությունից:

Երևան քաղաքի փոքր կենտրոնը տրանսպորտային միջոցների կայանումից ազատելու և ստացիոնար կայանատեղեր ապահովելու նպատակով Երևան քաղաքի Ազատության հրապարակում կառուցվել է ստորգետնյա ավտոկայանատեղի, որը նախատեսված է շուրջ 500 ավտոմեքենայի համար: Ավտոկայանատեղիի պաշտոնական բացումը կազմակերպվել է 2010 թվականի մայիսի 24-ին:

Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Ազատության հրապարակի ստորգետնյա կայանատեղիի աշխատանքների իրականացումը Երևանի քաղաքապետի 15.02.2011թ. հ.354-Ա որոշման հիման վրա գործակալության պայմանագրով սահմանված կարգով, իրականացվում է «Երևանտրանս» ՓԲԸ-ի կողմից: Վերոնշյալ գործակալության պայմանագրի ժամկետը լրացել է:

2013-2018թթ. ֆինանսական ցուցանիշների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ ավտոկայանատեղին գործում է թերբեռնված՝ հատկապես ձմռան ամիսներին: Նոյեմբեր-ապրիլ ժամանակահատվածում ավտոկայանատեղիից օգտվողների թիվը զգալիորեն ավելի փոքր է մայիս-հոկտեմբեր ամիսների համեմատությամբ՝ պայմանավորված հարակից սրճարանների գործունեության սեզոնային ակտիվությամբ:

Շուրջ 10 տարի առաջ տեղադրված գործող տեսահսկման համակարգն ունի արդիականացման խիստ անհրաժեշտություն: Տեղադրված տեսախցիկների հնարավոր նկարահանման մակերեսը սահմանափակված է միայն ճանապարհներով չընդգրկելով բուն կայանատեղերը: Միաժամանակ տեսախցիկների որակական հատկանիշները թույլ չեն տալիս հստակ ֆիքսել մեքենաների համարանիշները:

Համակարգի արդիականացման արդյունքում նախատեսվում է տեղադրել նոր, ժամանակակից տեսախցիկներ՝ որակական բարձր չափանիշներով, որը հետագայում կարող է օգտագործվել «Խելացի» կառավարման համակարգի շրջանակում:

Նախատեսվում է ներդնել ավտոկայանատեղիի մուտքի և ելքի ավտոմատ կառավարման և վճարման համակարգ, ինչպես նաև կատարել վերանորոգման աշխատանքներ:

Ավտոկայանատեղի շահագործման օրվանից առ այսօր լուսավորության համակարգն էական փոփոխության չի ենթարկվել: Նախատեսվում է ամբողջությամբ արդիականացնել լուսավորության համակարգը:

Մարկետինգային նպատակային քաղաքականության, ինչպես նաև էլետրոնային վճարային համակարգերի ներդրման և վճարային փաթեթների վերաբերյալ իրազեկման բարձրացման միջոցով նախատեսվում է ավտոկայանատեղիի զբաղվածությունը զգալիորեն մեծացնել:

Հավատարմագրային կառավարման տրամադրման արդյունքում նախատեսվում է բարձրացնել կառավարման արդյունավետությունը, ներդնել զեղչային համակարգ, լայնորեն կիրառել էլեկտրոնային վճարման եղանակները, առաջարկել երկարաժամկետ և/կամ մեծ թվով մեքենաներ ունեցող բաժանորդների համար նախատեսված վճարային փաթեթներ:

Արդյունքում, նախատեսվում է ավելացնել ավտոկայանատեղից օգտվողների թիվը և նպաստել երթևեկության բարելավմանը:

Հիմք ընդունելով վերը շարադրվածը՝ Երևան քաղաքի ավագանուն է ներկայացվում «Երևան քաղաքի Ազատության հրապարակում գտնվող ստորգետնյա ավտոկայանատեղին հավատարմագրային կառավարման հանձնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի Ազատության հրապարակում գտնվող ստորգետնյա ավտոկայանատեղին հավատարմագրային կառավարման հանձնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՄՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի Ազատության հրապարակում գտնվող ստորգետնյա ավտոկայանատեղին հավատարմագրային կառավարման հանձնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում էական փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ